Հավելված N 1
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
սեպտեմբերի 18 -ի N 619 – Ա
որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ
ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՎ ՀԱՅԱՀԱՏԻԿԻ, ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ, ԱԼՅՈՒՐԻ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՐՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Ա. Ավանեսյան	– ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, աշխատանքային խմբի ղեկավար
Ա. Եգանյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարության արդյունաբերության զարգացման վարչության պետ
Ռ. Նազարյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետ
Գ. Ղազարյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի գրովերամշակման զարգացման վարչության պետ
Ա. Ավագյան	- ՀՀ արտաքին գործերի նախարարության սահմանակից երկրների վարչության պետ
Ա. Նիկոյան	- ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի բուսասանիտարիայի տեսչության պետ
Ա. Կարապետյան	- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրանսպորտի վարչության, տեխնիկական քաղաքականության բաժնի պետ
Տ. Մնացականյան	- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային հսկողության վարչության մաքսային վարչարարության և մաքսային գործի զարգացման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ
Մ. Թարզյան	- ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի բուսասանիտարիայի տեսչության գլխավոր փորձագետ

Մ. Հարությունյան	- ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնտեսական անվտանգության և կոռուպցիայի հակազդման դեպարտամենտի աշխատակից
Գ. Նիկողոսյան	- «Մոդուս Գրանում» ՍՊԸ-ի հիմնադիր (համաձայնությամբ)
Ա. Այվազյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ, աշխատանքային խմբի քարտուղար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
սեպտեմբերի 18 -ի N 619 – Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՎ ՀԱՑԱՀԱՏԻԿԻ, ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ, ԱԼՅՈՒՐԻ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՐՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

1. Սույն աշխատակարգով սահմանվում է Վրաստանի տարածքով հացահատիկի, հացահատիկային կուլտուրաների, ալյուրի և կերային կուլտուրաների ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների արգելման հարցի կարգավորմանն աջակցող աշխատանքային խմբի աշխատակարգը:

2. Աշխատանքային խմբի գործունեության վայրն է՝ քաղ. Երևան, 0010, Մ. Մկրտչյան 5, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

3. Աշխատանքային խումբը՝

1) իրականացնում է աշխատանքային խմբի նիստերի անցկացումը.

2) ուսումնասիրում և վեր է հանում ոլորտում առկա խնդիրները և ըստ անհրաժեշտության լուծման առաջարկություններ ներկայացնում ՀՀ փոխվարչապետին.

3) անհրաժեշտության դեպքում աշխատանքային խմբի աշխատանքներին կարող են հրավիրել փորձագետների:

4. Աշխատանքային խմբի գործունեությունը կազմակերպվում է նիստերի միջոցով: Նիստերը հրավիրվում են, ըստ անհրաժեշտության, աշխատանքային խմբի նախագահի նախաձեռնությամբ, առնվազն եռամսյակը մեկ անգամ:

5. Աշխատանքային խմբի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ընթացքում աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Աշխատանքային խումբն իրավազոր է, եթե աշխատանքային

խմբի նիստին մասնակցում են աշխատանքային խմբի անդամների կեսից ավելին: Ձայների հավասարության դեպքում աշխատանքային խմբի նախագահի ձայնը վճռորոշ է:

6. Նիստերում քննարկված հարցերը, եզրահանգումները և ընդունված որոշումներն արձանագրվում են: Արձանագրություններն ստորագրվում են աշխատանքային խմբի անդամների կողմից: Աշխատանքային խմբի անդամի կողմից հատուկ կարծիք ունենալու դեպքում այն գրավոր ներկայացվում է աշխատանքային խմբի նախագահին և կցվում արձանագրությանը:

7. Աշխատանքային խմբի նախագահը՝

1) հրավիրում է աշխատանքային խմբի նիստերը և նախագահում դրանք.

2) կազմակերպում և համակարգում է աշխատանքային խմբի աշխատանքները.

3) ստորագրում է աշխատանքային խմբի որոշումները և արձանագրությունները, աշխատանքային խմբի գործունեության հետ առնչվող անհրաժեշտ փաստաթղթերն ու գրությունները:

8. Աշխատանքային խմբի անդամը՝

1) մասնակցում է աշխատանքային խմբի նիստերին.

2) իրականացնում է աշխատանքային խմբի առջև դրված խնդիրների լուծման հետ կապված աշխատանքները.

3) ստորագրում է աշխատանքային խմբի նիստերի արձանագրությունները.

4) աշխատանքային խմբի նիստին մասնակցել չկարողանալու դեպքում (հարգելի պատճառով) նախապես տեղեկացնում է աշխատանքային խմբի նախագահին:

9. Աշխատանքային խմբի քարտուղարը՝

1) նախապատրաստում է աշխատանքային խմբի նիստերը.

2) աշխատանքային խմբին տրամադրում է վերջինիս գործունեությանը վերաբերող նյութերն ու ընթացիկ տեղեկատվությունը.

3) կազմում է աշխատանքային խմբի նիստերի արձանագրությունները և դրանք ներկայացնում նիստին մասնակցած աշխատանքային խմբի անդամների ստորագրությանը.

4) վարում է աշխատանքային խմբի աշխատանքների հետ կապված գործավարությունը և փաստաթղթերը հանձնում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ